



«Նոր ժամանակի Կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը
և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Գալինա

Ուսումնական հաստատություն՝ Ֆանտանի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ 'ՌՈՒՄԱՑ ԼԵՉԿԻ' ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	19
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների ինքնուրույն մտածողության ձևավորումն ու զարգացումը միշտ էլ համարվել է ուսուցման գործընթացի կարևորագույն նպատակներից մեկը: Դեռևս հին հունական մանկավարժության մեջ օգտագործվում էր հետազոտական մեթոդները: Հույն փիլիսոփա Սոկրատեսը կիրառում էր ուսուցման տարբեր եղանակներ (ինդուկցիա, հեգևանք և այլն):

Մ. Լոնգը և Բ. Ռոբերտսը պրոբլեմային ուսուցումը նույնացնում են հետազոտական մեթոդի հետ՝ առանց նշելու նրա առանձնահատկությունները: Նրանք իրավացիորեն պահանջում են դասագրքերի շարադրանքը դնել պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու ուղու վրա: Այնուհետև ավելի արդյունավետ օգտագործել զննական պարագաները, քարտեզները, ատլասները: Նրանք պրոբլեմային ուսուցումը դիտում են որպես ուսուցչի և աշակերտի հետազոտական, որոնողական կարողությունների զարգացման եղանակ:

Շատ կարևոր է ուսուցման հետազոտական մեթոդը: Այն ունի հետևյալ հաջորդական փուլերը՝ խնդրի լուծում, նոր փաստերի, երևույթների պարզաբանում, ուսումնասիրված երևույթի, փաստի վերաբերյալ եզրակացությունների ձևավորում, դրանց օգտագործումը՝ հետազայում այլ երևույթներ, փաստեր ուսումնասիրելու, հետազոտելու համար: Ուսուցման հետազոտական մեթոդի էությունն այն է, որ այս դեպքում ուսուցիչը լայն հնարավորություն է ունենում զարգացնելու աշակերտների հետազոտական, որոնողական ընդունակությունները: Հետազոտական մեթոդի կիրառումը սկսվում է և ավարտվում է ինքնություն աշխատանքի ընթացքում: Սովորողը ինքն է կազմում հետազոտության պլանը և այլն, իրագործում ուսուցչի ղեկավարությամբ, պահպանելով, անշուշտ, ճանաչողական պրոցեսի վերը հիշատակված փուլերը:

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել դպրոցում պրոբլեմային ուսուցման տեսական ասպեկտները:

Աշխատանքի օբյեկտը դպրոցականների ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան պրոբլեմային ուսուցումն է՝ որպես ռուսաց լեզվի դասաժամերին դպրոցականների ինտելեկտուալ զարգացման գործոն:

Ելնելով նպատակին հասնելու օբյեկտից և առարկայից՝ մենք առանձնացրել ենք հետևյալ խնդիրները .

- Ուսումնասիրել և վերլուծել հոգեբանական, մանկավարժական և մեթոդական գրականությունը հետազոտական թեմայի վերաբերյալ:
- Բացահայտել պրոբլեմային ուսուցման էությունը:
- Մշակել դասեր պրոբլեմային ուսուցման տարրերով կամ կազմել պրոբլեմային առաջադրանքների ընտրություն, որոնք նպաստում են ուսանողների ինտելեկտուալ զարգացմանը:

Չետագոտության նպատակներն իրականացնելիս օգտագործվել են հետևյալ մեթոդները.

- հոգեբանական, մանկավարժական և մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- առաջատար ուսուցիչների փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում,
- խնդրի վրա հիմնված ուսուցման կազմակերպման հարցում ուսուցիչների գործունեության վերլուծություն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական նյութից՝ երկու գլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Չետագոտությունն իրականացնելիս օգտագործել ենք մի շարք հայտնի մանկավարժների աշխատություններից, ինչպիսիք են Յու. Ամիրջանյանը, Ա. Մանուկյանը, Վ. Օկոնը, Մ. Մախմուտովը:

ՊՐՈՔԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից դպրոցում աշակերտի ճանաչողական ակտիվությունը դրվում է առաջին պլանում: Ակտիվությունը մարդու կարևորագույն հատկություններից է: Ակտիվությունը գործողություն է, որը կարող է փոխել շրջապատի իրականությունը, այն համապատասխանեցնել սեփական պահանջմունքներին, նպատակներին: Սխալված չենք լինի եթե ասենք, որ նույնիսկ հիշողության առավել մարզվածությունը ժամանակակից դպրոցում չի կարող ունենալ այնպիսի որոշիչ նշանակություն, ինչպիսին ունենում է տրամաբանական մտածողությունը. դա հաստատվում է նաև պրոբլեմային ուսուցման առաջավոր փորձով: Պրոբլեմային ուսուցումը հասարակական, պատմական պահանջ է: Մանկավարժական առաջավոր փորձը հաստատում է այն ճշմարտությունը, որ առանց միջգիտական և միջառարկայական կապերի խելացի օգտագործման չի կարող լինել արդյունավետ ուսուցում և հատկապես՝ պրոբլեմային ուսուցում:

Մեր ժամանակաշրջանը դպրոցից պահանջում է զարգացնել սովորողների մտածելու, տրամաբանելու ու եզրահանգելու ունակություններն ու կարողությունները, որպեսզի երեխաները լինեն որոնողներ, հայտնագործողներ, կյանքի սլացքին համընթաց անձնավորություններ: Ահա թե ինչու այժմ պրոբլեմային ուսուցումը իր բնույթով դառնում է որպես մանկավարժական, հոգեբանական, համահասարակական կարևորագույն հարց:

‘Պրոբլեմ’ բառն ունի հունական ծագում, որը նշանակում է խնդիր, առաջադրանք, տառաջիորեն՝ առաջ նետված ինչ-որ բան: Արդի իմաստով պրոբլեմը տեսական ու գործնական բարդ հարց է, որը պահանջում է լուծում, ուսումնասիրում, հետազոտում:¹

Ի տարբերություն ավանդական կրթության, այն ուսանողներին տալիս է ինքնահռչակման և ինքնաբացահայտման ունակություն, և ամենակարևորը, ապահովում է երեխաների ստեղծագործական գործունեության զարգացումը:

Արդի պայմաններում պրոբլեմային ուսուցումը դառնում է խիստ անհրաժեշտություն, որի միջոցով կարելի է զարգացնել սովորողների ինտելեկտուալ կարողությունները, դաստիարակել նրանց անձնավորությունը, կորոդինացնել ուսուցման զանազան մեթոդներ:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ուսուցման գործընթացում աշակերտների զարգացման ինքնատիպ համակարգ է, որի հիմքում դրված է ուսումնական խնդիրների հաճախակի և նպատակային առաջադրումը դասավանդան գործընթացում և աշակերտների ակտիվ ներգրավումն այդ խնդիրների լուծման աշխատանքներին: Այս տեխնոլոգիայի արդյունավետ կիրառման նպատակով դասագործընթացում օգտագործվում են մատուցվող նյութի պրոբլեմային շարադրման և որոնողական էվրիստիկ գրույցի մեթոդը: Պրոբլեմային դասը կրում է հետազոտական բնույթ: Այսպիսի դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին ներգրավելու ակտիվ իմացական գործընթացում: Այստեղ

¹Յու. Ամիրջանյան, ‘Մանկավարժություն’, Երևան, 2005 թ., էջ 230

փոխվում է նաև ուսուցչի դերը: Նա դառնում է օգնական, խորհրդատու, դիտորդ, տեղեկատվության աղբյուր, կանոնակարգող:

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության սոր եղանակներկարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի: Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը սովորողների տրամաբանական մտածողության զարգացումն է, որը իրականացվում է պրոբլեմային խնդիրներ լուծելու միջոցով: Ի դեպ, պրոբլեմային խնդիրներ լուծելիս, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործողության հետևյալ ընդհանուր կառուցվածքը՝ նպատակը, եղանակը, պայմանները:

Պրոբլեմային դասավանդման մտավոր ակունքները սկիզբ են առել Ջոն Դյուևի աշխատություններից: Դյուևի այն միտքը, որ դպրոցները պետք է լինեն իրական խնդիրների լուծումներ փնտրող լաբորատորիաներ, պրոբլեմային դասավանդման փիլիսոփայական հիմնաքարն է:

Պրոբլեմային ուսուցման ժամանակակից մոդելը հենված է կառուցողականության հայեցակարգի վրա, որի մշակման գործում մեծ ներդրում ունեն հոգեբաններ Ժան Պիաժեն և Լև Վիգոտսկին: Նրանք հավատացած էին, որ մտավոր կարողությունները զարգանում են, երբ անհատը հայտնվում է սոր և շփոթեցնող իրավիճակներում և ճգնում է հարթել փորձի հակասությունները: Ըմբռնելու համար անհատը սոր գիտելիքը շաղկապում է հնին և սոր իմաստ կերտում:

Պիաժեն գտնում է, որ օրինակելի մանկավարժությունը երեխային պետք է ներգրավի այնպիսի իրավիճակում, որտեղ նա ինքնուրույն փորձեր, կանխագծումներ ու եզրահանգումներ կատարի, իմտորեն օգտագործի առարկաներ ու տարբերակի խորհրդանիշներն, հարցումներ անի, ինքնուրույնապատասխաններ փնտրի, բացահայտի այլընտրանքային լուծման տարբերակներ, իր դիտարկումների արդյունքը բաղդատի մյուսների արդյունքների հետ:

Ըստ Վիգոտսկու՝ սովորողներն ունեն զարգացման երկու տարբեր աստիճաններ՝ զարգացման իրական աստիճան և հնարավոր զարգացման աստիճան: Իրական ու հնարավոր զարգացման աստիճանների միջև ընկած գոտին Վիգոտսկին անվանել է մտավոր զարգացման գոտի:

Պրոբլեմային ուսուցման էությունը, ինչպես իրավացիորեն նշում են Մ. Ի. Մախմուտովը, Ա. Մ. Մատյուշկինը և ուրիշները, պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը

արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը:¹Այն ընձեռում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, վարկածներ առաջ քաշելու, գործողության նոր եղանակներ հաղտնաբերելու, պրոբլեմը լուծելու, իրավիճակը հաղթահարելու, վերջնական նպատակի հասնելու հնարավորություն:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի նպատակն ուսումնական պարապմունքների այնպիսի կազմակերպումն է, երբ ստեղծված պրոբլեմային իրավիճակի արդյունքում խթանվում է Աշակերտների ինքնուրույն ակտիվ գործունեությունը՝ ծագած խնդիրների լուծման ուղղությամբ: Արդյունքում տեղի է ունենում գիտելիքների, կարողությունների, հմտությունների տիրապետում և մտածական ընդունակությունների զարգացում:

Պրոբլեմային ուսուցման գլխավոր տարրը անհայտն ու նորն է, այն, ինչը պետք է բացահայտվի խնդիրը ճիշտ լուծելու, անհրաժեշտ գործողությունը կատարելու համար:

Պրոբլեմային ուսուցումը զարգացնում է սովորողների իմացության ձևերը: Այն հնարավորություն է ընձեռում հաղթահարելու ստեղծված իրավիճակները, հակասություններն ու հակադրությունները, ձեռք բերելու ճանաչողական, կայուն ու խոր գիտելիքներ: Մ. Ա. Դավիդովը պրոբլեմային ուսուցման անհրաժեշտ պայման է համարում այն, որ գիտելիքները պատրաստի չտրվեն սովորողներին, այլ նրանք գիտելիքներ ձեռք բերեն ճանաչողական գործունեությունից:

Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում առաջ քաշել մտքեր, կարծիքներ, դրանք հակադրել միմյանց, ստեղծել կարծիքների հակասություն, ուսումնասիրել, իրար համադրել կարծիքներն ու մտքերը, հերքել կամ հաստատել դրանք:

Պրոբլեմային ուսուցման ընթացքում ուսուցիչը պետք է սովորողներին պարզաբանի կարծիքների, մտքերի, վարկածների համադրման, ընդունման կամ ժխտման եղանակները, ցույց տա, որ դժվար ճշտվող կամ հերքվող ենթադրությունները գիտությունից պահանջում են երկարատև ժամանակաշրջան, գիտության ու տեխնիկայի անսխալ ընթաց զարգացում:

Պրոբլեմային ուսուցման ընթացքում և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը յուրօրինակ հայտնագործողներ են, որոնողներ, հետազոտողներ: Տարբերությունը, սակայն, այն է, որ ուսուցիչը այդպիսի պրոցեսի նաև կառավարողն է, մի բան, որ միշտ էլ կմնա, որքան էլ կատարելագործվեն ու նոր որակ ստանան ուսուցման մեթոդները: Սակայն ուսուցիչի կողմից ղեկավարումն այնպիսին պետք է լինի, որ այն չվերածվի վնասակար, սովորողների ինքնուրույնությունը խաթարելու միջամտության:

Պրոբլեմային ուսուցման դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը իրական խնդիրներ առաջադրելն է, աշակերտների հետազոտությանն աջակցելը և նրա ուսումնասիրությունը քաջալերելը:

¹Յու. Ամիրջանյան, 'Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ', Երևան, 1975 թ., էջ 5

Գոյություն ունի պրոբլեմային ուսուցման չորս մակարդակ.

1. Ուսուցիչն առաջադրում է պրոբլեմը, ծրարկերպում է այն և աշակերտներին ուղղում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները,
2. ուսուցիչը խնդիր է դնում, աշակերտները ինքնուրույն կամ ուսուցչի ղեկավարությամբ լուծում են այն,
3. աշակերտը խնդիրը դնում է, ուսուցիչը օգնում է լուծել,
4. աշակերտը ինքն է դնում խնդիրը և լուծում է ինքնուրույն:

Ըստ Վ. Ա. Կրուտեցկու այս ամենի արդյունքը լինում է այն, որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար տեսնելու, պրոբլեմային իրավիճակն ինքնուրույն վերլուծելու և ինքնուրույնաբար ճիշտ պատասխան տալու ընդունակություն:

Պրոբլեմային ուսուցումն ունի, այսպես կոչված բնականի բնույթ կրող առանձնահատկություն: Պրոբլեմային ուսուցումը սուբյեկտի դիալեկտիկական մտածողությունը ձևավորելու արդյունավետ միջոց է, նախապատրաստական այդ փուլը, որը հնարավորություն է ընձեռում սովորողներին՝ բարձր դասարաններում, ընդհուպ մոտենալ փիլիսոփայական ընդհանրացումների ըմբռնել կատեգորիաներ ու հասկացություններ, քանակական ու որակական փոփոխություններ, զարգացման էվոյուցիոն և թռիչքածն ստադիաներ, բացասումը բացասելու օրենքներ, քանի որ, ինչպես հոգեբաններն են նշում, անցումը հայտնիից դեպի անհայտը հակադրությունների վերածումն է մեկը մյուսին: Սուբյեկտի մտածողությունը, որպես անհրաժեշտություն, ծագում է այն ժամանակ, երբ մարդը գործ է ունենում մի շարք նոր պայմանների հետ, որոնցում նա հայտնիի միջոցով չի կարող կատարել գործողություններ: Ուստի նա հարկադրված է լինում գտնել նոր միջոցներ, այդպիսի իրավիճակն էլ պրոբլեմային բնույթ է կրում:¹

Ուսուցման այս ձևն ունի մի շարք առավելություններ.

- զարգացնում է սովորողների տրամաբանական, դիալեկտիկական մտածողությունը,
- ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում,
- ուսուցման գործընթացը դառնում է հուզական,
- ընձեռում է միջառարկայական, միջգիտական կապերից օգտվելու հնարավորություն,
- ձեռք բերած գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են,
- ինտենսիվացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև մեծացնում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնացնում

¹Յու. Ամիրջանյան, 'Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ', Երևան, 1975 թ., էջ 30

Նրանց որոնողական՝ հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը, ծանոթացնում գիտական մեթոդներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պրոբլեմների առաջադրումն ու լուծումը կախված են հիմնականում սովորողի ինտելեկտուալ հնարավորություններից ու նրա մտածողության առանձնահատկություններից, ինչպես և պրոբլեմների տիպերից, որոնք կարող են լինել տեսական ու գործնական բնույթի: Առաջինի դեպքում սովորողը հենվում է նախկինում ձեռք բերած գիտելիքների վրա, որոնում անհայտը, իսկ երկրորդի դեպքում գլխավոր ելք է ընդունում սեփական փորձը, ինչպես նաև գործունեության այն նոր միջոցը, որը համապատասխանում է ստեղծված իրավիճակից դուրս գալուն:

Պրոբլեմային դասի ընթացքում ճանաչողական գործունեության առավելությունն այն է, որ առկա է ոչ միայն աշակերտի բովանդակային արդյունքային գործունեությունը, ինչպես պատրաստի գիտելիքների հաղորդման, այլև կողմնորոշող և օպերատիվ գործունեությունը:

Պրոբլեմային դասի ընթացքում ապահովվում է գիտակցության միասնության հոգեբանական կարևորագույն սկզբունքի կենսագործումը:

Պրոբլեմային ուսուցումը որպես աշակերտի ճանաչողական հետաքրքրությունը խթանող միջոց է համարում Գ. Ի. Շչուկինան: Նա ուսման նկատմամբ աշակերտի հետաքրքրության ձևավորման ու զարգացման միջոցներ է համարում.

- ուսումնական գործունեության բուն պրոցեսը,
- ճանաչողական գործունեության կազմակերպումը,
- ինքնուրույն աշխատանքը,
- պրոբլեմային ուսուցումը,
- ճանաչողական խնդիրների բարդացումը,
- գիտելիքների և կարողությունների կիրառման խնդիրները,
- ստեղծագործական աշխատանքը,
- փորձարարական-հետազոտական աշխատանքի անցկացումը,
- սեփական աճի զգացողությունն ու գիտակցումը և այլն:

Պրոբլեմային ուսուցման համար առանձնացվում են դասերի հետևյալ տեսակները/տիպերը՝ պրոբլեմային շարադրանքի դաս, մասնակի որոնողական դաս, պրոբլեմային ուսուցման առաջին մակարդակի դաս, երկրորդ մակարդակի դաս, երրորդ մակարդակի դաս և այլն:¹

Պրոբլեմային ուսուցման նպատակային կողմնորոշիչներն են.

- ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակների ստեղծումը,
- աշակերտների ակտիվ իմացական գործունեության խթանումը,
- սովորողների ինքնուրույնության զարգացումը,

¹Լ. Թ. Ասատրյան, 'Մանկավարժություն', Երևան, 2017 թ., էջ 206

- դպրոցականների ստեղծագործական մտածողության ակտիվացումը,
- նրանց մտածական ընդունակությունների ձևավորումը,
- ուսումնական խնդիրների լուծումը:

Պրոբլեմային ուսուցման հատուկ գծերն են.

- Խթանողիարց կամ խնդիր. Պրոբլեմային ուսուցումը ուսուցման գործընթացը կազմակերպում է հասարակությանը հուզող և աշակերտների համար անձնապես իմաստալից հարցերի և խնդիրների շուրջ: Դրանք արտացոլվում են իրական կյանքի այնպիսի իրավիճակներ, որոնք պարզ պատասխանով չեն լուծվում, այլև կան հանգուցալուծման մրցակցող տարբերակներ:
- Միջառարկայական կենտրոնացում. Չնայած պրոբլեմային դասը կարող է կենտրոնացած լինել որոշակի առարկայի շրջանակներում, հետազոտվող իրական խնդիրն ընտրվում է հենց այն պատճառով, որ դրա հանգուցալուծման համար աշակերտը ստիպված լինի խորասուզվել բազմաթիվ առարկաների ոլորտներում:
- Իրական հետազոտություն. Պրոբլեմային ուսուցումը աշակերտից պահանջում է հետամուտ լինել իրական խնդիրների իրական լուծումների հայտնաբերմանը նպատակաուղղված իրական հետազոտության: Նրանք պետք է վերլուծեն և սահմանեն խնդիրը, մշակեն և քննարկեն, անհրաժեշտության դեպքում փորձեր կատարեն, հետևություններ ու եզրահանգումներ անեն:
- Իրերի և ցուցանմուշների կերտում, ստեղծում. Պրոբլեմային ուսուցումը աշակերտներից պահանջում է իրենց լուծումները ցուցադրող կամ բացատրող վերջնարդյունքի պատրաստում՝ ցուցանմուշների կամ ներկայացման տեսքով:
- Համագործակցություն. Համագործակցային ուսումնառության պես պրոբլեմային ուսուցմանը բնորոշ է աշակերտների միջև համագործակցությունը առավելապես զույգերով կամ փոքր խմբերով:

Պրոբլեմային ուսուցումը կատարում է զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաներ: Չարգացնող ֆունկցիաները բազմազան են: Այսպես, օրինակ, մոդելավորվում է Աշակերտների մտածողությունը, բարձրացնում նրա արդյունավետությունը: Ուսումնական առարկաների տրամաբանությունը մոտեցնում է գիտությունների տրամաբանությանը, իսկ ուսուցման տրամաբանությունը՝ ճանաչողական տրամաբանությանը: Կազմակերպում է սովորողների խմբային մտավոր աշխատանքը, ապահովում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը, իրացնում է գիտելիքների փոխանցումը նոր իրավիճակներում:

Պրոբլեմային ուսուցումը ունի հատուկ դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են՝ սովորողների ստեղծագործական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերած

գիտելիքների ստեղծագործաբար օգտագործումը, ստեղծագործական փորձի կուտակումը և այլն: Պրոբլեմային ուսուցումը օգնում է աշակերտին դառնալ անկախ ու ինքնուրույն սովորողներ:

Պրոբլեմային ուսուցման մեթոդների բնութագրմանն ու դասակարգմանը նվիրված են մի շարք արժեքավոր աշխատություններ: Սակայն առավել ամբողջական համակարգ առաջարկում է Մ. Ի. Մախմուտովը:¹ Նրա կողմից առանձնացվում են պրոբլեմային ուսուցման երկու մեթոդներ իրենց տարատեսակներով.

1. ուսուցչի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ,
2. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ:

Ուսուցչի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդի ամենակարևոր հատկանիշը գիտելիքների հաղորդման ընթացքում ուսուցչի կողմից հարցեր առաջարկելն է: Կախված գիտելիքների պրոբլեմայնության աստիճանից և արդյունավետության մակարդակից, տարբերվում են պրոբլեմային շարադրման երեք տեսակներ.

- 1) Պրոբլեմային շարադրման մեթոդը բնորոշվում է ուսուցչի կողմից պրոբլեմային հարցերի համակարգերի օգտագործման ուսումնասիրվող հարցերը սովորողների կողմից ինքնուրույն կշռադատելու հնարավորությամբ: Տեղեկատվություն հաղորդող և բացատրական մեթոդների միջոցով ուսուցիչը ստեղծում է պրոբլեմային իրադրություն: Ուսուցիչը ինքը բացատրում է նյութը, սակայն անընդհատ ստեղծելով իրար հաջորդող պրոբլեմային իրադրություններ, աշակերտի ուշադրությունը գամում է նյութին և նրանց ներգրավում է առաջադրված հարցերի քննարկման գործընթացում: Այս մեթոդի կիրառման դեպքում սովորողների շատ մեծ ճանաչողական ակտիվություն չի նկատվում: Հասկացությունների յուրացման ծագումնաբանական, հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման խնդիրը ուղղակիորեն դրված չէ:
- 2) Ցուցադրական շարադրման մեթոդի կիրառմամբ ուղղակիորեն դրված է գիտության պատմության ընթացքում կիրառված հասկացությունների հոգեբանատրամաբանական յուրահատկությունների բացահայտման խնդիրը: Եթե նյութը հնարավորություն չի տալիս լիովին վերականգնել հասկացության բացահայտման պատմական ուղին, այդ դեպքում ուսուցիչը թեման շարադրելիս փորձում է իր դատողությունների միջոցով, ելնելով հայտնագործման հայտնի դրվագներից, վերականգնել գիտական որոնումների և հայտնագործման անհայտ դրվագները: Այս դեպքում գիտելիքների յուրացում տեղի է ունենում ինչպես նմուշի ընդօրինակում, այնպես էլ ինքնուրույն որոնումների ուղիով:

¹Գ. Ե. Ղույունյան, 'Մանկավարժություն', գիրք I, Երևան 2005 թ., էջ 453

3) Երկխոսական շարադրման մեթոդ: Այս մեթոդը երկխոսություն է ուսուցչի և սովորողների միջև: Նյութը շարադրելիս ուսուցիչը սովորողներին ներգրավում է պրոբլեմի ձևակերպման և դրանց լուծումների որոնումների ընթացքի մեջ: Ուսուցչի խնդիրն է բարդ պրոբլեմները այնպես ձևակերպել, որ ապահովվի սովորողի ակտիվ մասնակցությունը դրանց քննարկմանը: Ստեղծելով պրոբլեմային իրադրություններ՝ նա խթանում է սովորողների ակտիվ ճանաչողական գործունեությունը: Սովորողները 'օգնում են' ուսուցչին ընդհանրացնել փաստերը և եզրակացություններ կատարել:

Ի տարբերություն երկխոսության մեթոդի՝ Էվրիստիկ մեթոդով աշխատելիս ուսուցիչը գիտելիքներ հաղորդելիս դրդում է աշակերտներին ինքնուրույն լուծել խնդիրը, հրահրում է բանավեճեր, զրույցներ և այլն: Ուսուցիչը պետք է հետևողականորեն ստեղծի պրոբլեմային իրադրություններ և առաջադրի նորանոր պրոբլեմային հարցեր և առաջադրանքներ: Դիդակտիկայում այս մեթոդի կիրառումը համարվում է գործնականում դժվար և ոչ միշտ հնարավոր:

Չետագոտական մեթոդը համարվում է առավել արդյունավետ պրոբլեմային մեթոդ: Օգտագործվում է բարձր պրոբլեմային առաջադրանքներ կատարելիս, ընդ որում՝ հարցի հետագոտման բոլոր փուլերը աշակերտները պետք է անցնեն ինքնուրույն:

Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններից են՝ պրոբլեմային շարադրանքը, ուսումնական պրոբլեմը (կամ ուղղակի պրոբլեմային խնդիրը), պրոբլեմային հարցը և պրոբլեմային իրավիճակը:

Պրոբլեմային շարադրանքը ուսուցման այն գլխավոր ձևերից է, որի միջոցով հնարավոր է զարգացնել սովորողների գիտահետազոտական, որոնողական և ընդհանրապես նրանց մտավոր գործունեության տեսակները: Պրոբլեմային շարադրանքը սովորական շարադրանքից տարբերվում է նրանով, որ այս դեպքում ուսուցիչը բացահայտում է անհայտի որոնման ուղիները, ցույց է տալիս այն դժվարությունները, որ հանդես են գալիս մտածողության ընթացքում: Շարադրանքը պրոբլեմային է այն դեպքում, երբ պարունակում է պարզաբանող հարց: Նման շարադրանքի դեպքում ուսուցիչը խուսափում է երևույթների, փաստերի, իրադարձությունների էությունը բացատրելուց: Աշակերտներն իրենք են կատարում վերլուծություններ, հայտնագործում իրերի, երևույթների, իրադարձությունների ներքին էական կողմերը: Պրոբլեմային շարադրանքը աշակերտին սովորեցնում է մտածել գիտականորեն, տալիս է գիտական որոնման հիանալի օրինակ:

Պրոբլեմային խնդիրը որոնելի անհայտից բխող ենթապրոբլեմների ու պրոբլեմային հարցերի համակցությունն է, դրանց ամբողջականությունը կամ միջամտությունը, որն առաջացնում է պրոբլեմային իրավիճակներ: Ուսուցման գործընթացում պրոբլեմային խնդիրը իրագործում է որոնելի անհայտի բացահայտման ֆունկցիա: Նպաստում է

գործողությունների նոր գիտելիքներ հայտնագործելուն, հանդես է գալիս տրամաբանական, հոգեբանական հակասությունների ձևով: Ուսումնական պրոբլեմի առաջադրումը մեծ մասամբ կախված է ուսուցչի հմտությունից, առարկայական մեթոդամանկավարժական պատրաստակամությունից:

Պրոբլեմային է կոչվում այն հարցը, որն առաջացնում է ճանաչողական դժվարություն: Եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ կամ անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ: Պրոբլեմային յուրաքանչյուր հարց պետք է սովորողների մեջ առաջացնի հետաքրքրություն ու մտավոր գործունեության լարվածություն:

Ի՞նչ է իրենից ներկայացնում պրոբլեմային իրավիճակը: Պրոբլեմային իրավիճակը ուսուցման կենտրոնական օղակն է: Այն Աշակերտների համար ստեղծված հոգեկան լարված պահն է, որը լի է հակասություններով:

Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր, նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ, համախմբում է իր ունեցած գիտելիքները, կարողությունները, տրամաբանում է, առաջադրում վարկածներ և այլն: Այս ամենը նրան հարկադրում է ստեղծված պրոբլեմային իրավիճակը: Ուստի իզուր չէր Ս. Լ. Ռուբինշտեյնն ասում, որ մտածողության սկիզբը պրոբլեմային իրավիճակի ծագումն է:

Վ. Օկոնը իրավիճակ է համարում փաստը, որը իր վրա է հրավիրում սուբյեկտի ուշադրությունը: Նրա կարծիքով որքան որոշակի ձև ընդունի իրավիճակը, այնքան հնարավոր կլինի առավելագույն չափով ակտիվացնել սովորողներին, նրանց մասնակից դարձնել պրոբլեմի լուծմանը: Պրոբլեմի լուծումը ներառում է մի շարք փուլեր: Պրոբլեմի լուծումը սուբյեկտի մտավոր գործունեության մեջ ընդունում է աստիճանական ու հաջորդական բնույթ: Վ. Օկոնը նշում է անցման հետևյալ աստիճանները.

1. պրոբլեմի լուծման միջոցի որոնում,
2. այդ միջոցով նոր կապերի, հարաբերությունների հայտնաբերում,
3. որոնված սկզբունքների, տարրերի իրացումը, սինթեզումը,
4. պրոբլեմները վճռելու եզրափակիչ փուլ, որով ստուգվում է լուծված խնդրի, իրավիճակի, պրոբլեմի ռեալականությունը:

Վերջիններս հոգեբանները համակարգում են նաև հետևյալ կերպ.

1. պրոբլեմային իրավիճակի ծագում,
2. հայտնի միջոցների գործադրում՝ պրոբլեմը լուծելու համար,
3. որոնումների ոլորտի ընդլայնում՝ 'փակ' պրոբլեմի լուծման համար,
4. գտնված սկզբունքների իրացում,
5. լուծված պրոբլեմի ստուգում:

Վ. Օկոնը պրոբլեմային ուսուցումը համարում է դինամիկ ուսուցում, լի շարժուն, փոփոխվող, զարգացող, լրացվող մտքերով: Երբեմն կարող են ծագել պրոբլեմներ, որոնք լուծվում են միայն մասնակիորեն:

Պրոբլեմային իրավիճակը առաջանում է ուսումնական նյութի տրամաբանությունից: Ուսումնական բոլոր նյութերը չէ, որ կարող են ծառայել պրոբլեմային ուսուցմանը:

Ուսուցիչը պարտավոր է իմանալ պրոբլեմն առաջադրելու և ձևակերպելու, այն ենթադրումների, հարցերի տրոհելու, պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու կանոնները:

Խնդրի ընտրություն կատարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ նկատառումները՝ ա. Արդյո՞ք այդ իրավիճակը հետաքրքիր կլինի աշակերտների տվյալ խմբի համար, բ. Այս խնդրի հետազոտումն իրագործելի՞ է և արդյո՞ք հատկացված ժամանակն ու նյութատեխնիկական առկա պաշարներն արդյունավետ հետազոտություն վարելու հնարավորություն են ընձեռում:

Ուսուցման ընթացքում պրոբլեմային իրավիճակը կատարում է երեք գլխավոր ֆունկցիա.

1. յուրացման պրոցեսում հանդես է գալիս որպես տարրական օղակ,
2. ապահովում է յուրացման պրոցեսի հիմնական պայմանները,
3. ստուգում է յուրացումը:

Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում.

- դիտելու փաստերը և երևույթները,
- գնահատելու և վերլուծելու մանկավարժական իրավիճակները,
- ձևակերպելու մանկավարժական խնդիրները,
- որոնելու վարկածների արդյունավետ տարբերակները,
- վերլուծելու խնդիրների լուծման արդյունքները,
- ձևավորելու նոր խնդիրներ:¹

Վ. Օկոնը պրոբլեմային իրավիճակից դուրս գալը չի դիտում որպես առանձին, սուբյեկտի նախկինում ձեռք բերած գիտելիքներից անկախ ու կտրված գործողություն, ընդհակառակը՝ նա մեծ տեղ է հատկացնում ոչ միայն նախկինում ձեռք բերած գիտելիքներին, այլև դրանց խորությանը, դրանք պրակտիկայում և գիտության մեջ գործածելուն:

Մեկ առանձին վերցրած պրոբլեմ-հարց չի կարող առավել չափով խթանել սուբյեկտի տրամաբանական մտածողության զարգացումը, ապահովել դիալեկտիկական կողմը, ուստի և պրոբլեմային իրավիճակից դուրս գալու համար դժվարություն կստեղծվի: Ահա թե ինչու յուրաքանչյուր պրոբլեմային իրավիճակ, պրոբլեմ պետք է դիտել որպես ուսուցման ամբողջ

¹Ա. Մանուկյան, 'Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաները և տեխնոլոգիական համակարգեր', Երևան, 2013 թ., էջ 19

շղթայի բաղկացուցիչ մաս: Հետևաբար իրավիճակը դժվար կացություն է փաստի, պրոցեսի, խնդրի անհայտը գտնելու պահը՝ լի մտքերի հակասություններով բախումներով ու կոնֆլիկտներով: Իրավիճակը սովորողների հետաքրքրությունները շարժող հիմնական գործոնն է, նոր մտքերի իսկական գործոնն է զարթեցուցիչը ուսուցման նոր պայմաններում:

Մ. Ա. Դանիլովը պրոբլեմային իրավիճակի կարևոր պայմաններ է համարում՝ ա. սովորողների կողմից դժվարությունների ըմբռնումը և դրանց հաղթահարումը, բ. նրանց ուժերին համաչափ դժվարությունների ճանաչումը, գ. դժվարությունները հաղթահարելու նախապատրաստությունը, դ. Նրանց տեսադաշտից հեռացնելով այն ամենը, ինչը ետ է պահում որոնումներից, որոնց միջոցով պետք է լուծվի պրոբլեմը և այլն:

Պրոբլեմային ուսուցման բազմաթիվ եղանակներից կարելի է նշել.

- խնդրային եղանակ,
- դիտարկման եղանակ,
- հակադրության եղանակ:

Պրոբլեմային իրավիճակը պետք է ունենա հոգեբանական էլեմենտ՝ փաստերը պետք է լինեն նոր և տպավորիչ, իսկ իմացական խնդիրը՝ անսովոր, արտառոց, հետաքրքրագրիչ, այն պետք է հետաքրքրի սովորողին և նրա մեջ առաջացնի իմացական որոնման ձգտում:

Պրոբլեմային իրավիճակ ստեղծելու և դրանից դուրս գալու համար կարևոր դեր ունեն երևակայությունը, ֆանտազիան, ինտուիցիան:

Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման տեխնոլոգիայի կառուցվածքը ներառում է.

- ուսումնական գործընթացի կազմակերպումը,
- սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդների ու ձևերի ընտրությունը,
- հաղորդվող նյութի յուրացման գործընթացի կառավարումը,
- ուսումնական գործընթացի ախտորոշումը:¹

Պրոբլեմային իրավիճակի ստեղծումը ենթադրում է տեսության ու պրակտիկայի սերտ միասնություն, քանի որ միայն դա կարող է լինել գլխավոր պայմաններից մեկը՝ ինչպես պրոբլեմային իրավիճակ ստեղծելու, այնպես էլ այն հաղթահարելու համար: Դա մեծացնում է պրոբլեմային ուսուցման պրակտիկ ու տեսական նշանակությունը, ստեղծում լայն հնարավորություններ արդյունավետ օգտագործելու դասագրքի տեքստը, նկարները, դիագրամները, սխեմաները, կենդանի բնությունը, ուսուցման տեխնիկական միջոցները և զարգացնելու Աշակերտների տրամաբանական մտածողությունը:

¹Ա. Մանուկյան, 'Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր', Երևան, 2013 թ., էջ 126

Ա. Մ. Մատյուշկինը նշում է պրոբլեմային իրավիճակ ստեղծելու վեց կանոն.

1. Աշակերտների առջև դնել այնպիսի գործնական կամ տեսական խնդիրներ, որոնց լուծման ժամանակ նրանք հայտնագործեն յուրացման ենթակա նոր գիտելիքները կամ գործողությունները:
2. Աշակերտին առաջադրվող պրոբլեմային խնդիրը պետք է համապատասխանի նրա ինտելեկտուալ հնարավորություններին: Ընդ որում, դժվարության մակարդակը պետք է գնահատվի երկու ցուցանմուշով՝ ա) նյութի նորության մակարդակով, բ) նրա ընդհանրացման մակարդակով:
3. Պրոբլեմային խնդիրը պետք է նախորդի յուրացմանը ենթաուսումնական նյութի բացահայտմանը:
4. Իբրև պրոբլեմային խնդիրներ կարող են ծառայել՝ ա) ուսումնական խնդիրները, բ) հարցերը, գ) գործնական խնդիրները և այլն: Չպետք է շփոթել պրոբլեմային խնդիրը պրոբլեմային իրավիճակի հետ, պրոբլեմային խնդիրը կարող է վերածվել պրոբլեմային իրավիճակի, եթե պահպանվեն վերոհիշյալ պայմանները:
5. Միևնույն պրոբլեմային իրավիճակը կարող է ստեղծվել տարբեր տիպի խնդիրներից:
6. Ծագած պրոբլեմային իրավիճակը պետք է ձևակերպի ուսուցիչը՝ մատնացույց անելով ուսումնական խնդիրները չկատարելու պատճառները:

Պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու եղանակները և կանոնները սահմանելիս՝ նկատի պետք է ունենալ նաև ուսուցչի գործունեությունը. չէ՞ որ դրանք առաջին հերթին կախում ունեն ուսուցչի դասավանդման արվեստից, նրա ինտելեկտուալ կարողություններից, մասնագիտական և մեթոդա-մանկավարժական պատրաստությունից:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ‘ՌՈՒՄԱՑ ԼԵՉՎԻ’ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ներկայումս ուսուցիչներն ու գիտնականները համակարծիք են, որ կրթության ավանդական ձևերը հնացել են, ժամանակակից աշակերտների ուշադրությունը գրավելու համար նախևառաջ պետք է զարմացնել և հետաքրքրել նրանց: Դա ամենևին էլ հեշտ չէ: Դա անելու համար ուսուցիչը պետք է օգնի յուրաքանչյուր ուսանողի զգալ իր ներգրավվածությունը առարկայի մեջ: Վերջին տարիները նշանավորվել են ակտիվ որոնումներով և մեթոդների լայն կիրառմամբ, որոնք կարող են զգալիորեն բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան այս հարցում էական դեր է խաղում: Ուսուցման խնդիրը գոյություն ունի երկու հիմնական ձևով.

- Որպես դասի թեմա.
- Որպես դասի թեմայի հետ չհամընկնող հարց, որի պատասխանը կլինի նոր գիտելիքները, որոնք դասի թեմա են:

Գիտելիքների պրոբլեմային ներկայացման մեթոդները տեղի են ունենում դասերի երեք փուլերում. գիտելիքների թարմացում, խնդրի ձևակերպում, երեխաների կողմից նոր գիտելիքների «բացահայտում»:

Երեխաների կողմից նոր գիտելիքների «բացահայտում» հիմնված է ինչ-որ մտավոր գործողության վրա, ուստի գիտելիքների թարմացման փուլը պետք է ներառի առաջադրանքներ, որոնք մարզում են այս մտավոր գործողությունը, օրինակ՝ գտնել ավելորդ բառը, բաժանել այն խմբերի, համեմատել և նշել տարբերությունը, առաջադրանքները: Տարբերակային մտածողության, ուշադրության, հիշողության և այլնի զարգացման համար: Վերջին առաջադրանքում նախատեսված է «բարդություն»: Գիտելիքների թարմացման փուլի ավարտը կապված է գործունեության մեջ «դժվարությունների» ամրագրման հետ:

Դասարանում խնդիր դնելու երեք եղանակ կա.

- Պրոբլեմային իրավիճակի ստեղծում:
- Առաջատար երկխոսություն:
- Դասի թեմայի ուսուցչի հաղորդագրությունը ավարտված ձևով, բայց օգտագործելով մոտիվացնող տեխնիկա:

Պրոբլեմային իրավիճակ ստեղծելու առաջին միջոցը: Ամենաբնորոշը «դժվարությամբ» պրոբլեմային իրավիճակն է: Այն հիմնված է ուսուցչի գործնական առաջադրանքը կատարելու անհրաժեշտության և առանց այսօրվա նոր կյանքի դա անելու անհնարիտության հակասության վրա: Աշակերտներին պրոբլեմային իրավիճակից դուրս բերելու համար ուսուցիչը օգտագործում է երկխոսություն, որը խրախուսում է նրանց ճանաչել հակասությունը և ձևակերպել խնդիրը:

Դասի ընթացքում ուսուցման խնդիր դնելու երկրորդ եղանակը առաջատար երկխոսությունն է: Ներածական երկխոսության կառուցվածքը կարող է ներառել նաև վերարտադրողական առաջադրանքներ (հիշել, անել սովորականը) և մտավոր առաջադրանքներ (վերլուծել և համեմատել): Վերջին հարցի պատասխանը կլինի դասի թեմայի ձևակերպումը:

Ուսուցման խնդիր դնելու երրորդ եղանակը: Դասի թեմայի ուղերձը պատրաստ է, բայց մոտիվացնող կետով: Գոյություն ունի երկու տեխնիկա՝ «պայծառ կետ» և «արդիականություն»: Առաջինը ուսանողներին հետաքրքիր նյութեր հաղորդելն է (հեքիաթներ, գեղարվեստական գրականության դրվագներ): Երկրորդը՝ բացահայտել թեմայի արդիականության նշանակությունը հենց ուսանողների համար:

Կրթական խնդրի ձևակերպման մեջ կապի հիմնական հոգեբանական իմաստը ուսանողների մոտ նոր գիտելիքների յուրացման մոտիվացիայի առաջացումն է: Բացի այդ, առաջին երկու ուղիներն ապահովում են որոշակի ազդեցություն. խրախուսական երկխոսությունը ձևավորում է ուսանողների ստեղծագործական կարողությունները, առաջատարը՝ տրամաբանական մտածողությունը, և երկուսն էլ ակտիվորեն զարգացնում են խոսքը: Ռուսաց լեզվի դասերին օգտագործվում են մեր դիտարկած մեթոդները «դժվարությամբ» պրոբլեմային իրավիճակ ստեղծելու համար: Այս դասերի համար բնորոշ է նաև «անակնկալով» պրոբլեմային իրավիճակ ստեղծելու տեխնիկան, որտեղ.

- ուսանողների տարբեր կարծիքները բախվում են հարցի կամ գործնական առաջադրանքի հետ.
- ուսանողների ներկայացումը բացահայտվում է հարցով կամ գործնական առաջադրանքով «սխալի» համար, այնուհետև գիտական փաստը ներկայացվում է հաղորդագրության, փորձի կամ վիզուալիզացիայի միջոցով:

Առաջին բանը, որ ուսուցիչը պետք է որոշի, այն է, թե որն է դասի թեման (որոշ դեպքերում դա կարող է դառնալ ուսուցման խնդիր) և որն է կոնկրետ նոր գիտելիքը (որը պետք է բացահայտվի): Ցանկալի է, որ ինքն էլ հասկանա ներդրվող գիտելիքի տեսակը՝ փաստ, կանոն, հասկացություն, օրինաչափություն: Լուծման որոնումը կարող է ընթանալ դասական մեթոդով՝ վարկածների և վարկածները խրախուսող երկխոսության միջոցով: Լուծման որոնումն ավարտվում է դասի կամ հարցի թեմայի ձևակերպմամբ: Ժամանակակից դպրոցի խնդիրը ոչ միայն ուսանողներին գիտելիքներով զինելն է, այլև սովորեցնել նրանց կատարել դիտարկումներ, ստեղծագործ մտածել, տրամաբանել, եզրակացություններ անել և ընդհանրացումներ անել: Ուսուցման ժամանակակից մեթոդները պետք է նպաստեն ճանաչողական գործունեության իրականացման:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների. պրոբլեմային ուսուցմամբ վերջին տասնամյակում սկսել են զբաղվել աշխարհի բազմաթիվ մանկավարժներ և հոգեբաններ: Գիտամանկավարժական առումով պրոբլեմային ուսուցումը և պրոբլեմային իրավիճակը տեսական ու պրակտիկ նշանակություն ունեցող բարդ խնդիրներ են, որոնք պահանջում են տեսական փորձարարական ուսումնասիրություններ: Պրոբլեմային իրավիճակի վերաբերյալ մանկավարժական, մեթոդական, հոգեբանական դրույթներ ու հայեցակետեր մշակելիս կամ առաջադրելիս չպետք է անտեսել ուսուցման ավանդական ձևերն ու մեթոդները, այլ անհրաժեշտ է մտածել այնպիսի միջոցների մասին, որոնք ապահովեն ավանդական և նորագույն մեթոդների կոորդինացումը: Բոլոր առաջավոր մեթոդների կոորդինացված համակարգն էլ մեծապես կնպաստի ուսուցման արդյունավետությունը բարձրացնելուն: Պրոբլեմային իրավիճակների ստեղծման եղանակներն ու կանոններ պետք է առաջադրվեն ոչ միայն ըստ առարկաների, այլև ըստ դասարանների, ըստ տվյալ առարկայի տարբեր բաժինների և համեմատաբար բարդ թեմաների: Պրոբլեմային իրավիճակների ստեղծման եղանակներ ու կանոններ մշակելիս կամ առաջադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն աշակերտի, այլև ուսուցչի գործունեությունը: Հենվելով առաջավոր ուսուցիչների փորձի վրա՝ միաժամանակ պետք է հաշվի առնել պրոբլեմային ուսուցման տեսական հիմունքները:

Պրոբլեմային ուսուցման դեպքում ուսուցչի օգնությամբ աշակերտներին հնարավորություն է ընձեռվում բացահայտել սեփական կարողությունները, սովորում են գիտելիքները ձեռք բերել ինքնուրույն, որն էլ նպաստում է գիտելիքների ամրապնդմանը: Պրոբլեմային ուսուցումը մեր օրերում ևս կիրառվում է: Այն կարևոր դեր և նշանակություն ունի ուսուցման համար: Դասի ընթացքում պրոբլեմային իրավիճակներ ստեղծելով ուսուցիչը սովորողներին ստիպում է ինքնուրույն մտածել, ձեռք բերել նոր գիտելիքներ և սովորել ու յուրացնել նոր և բարդ նյութը:

Այսպիսով, պրոբլեմային ուսուցումը՝

- թույլ է տալիս օգտագործել ուսանողի կրթական և ճանաչողական գործունեության որոնման սկզբունքը.
- նպաստում է ուսանողների գիտական մտածելակերպի զարգացմանը.
- ընդլայնում է ուսանողների մտահորիզոնը, նպաստում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը,
- նպաստում է ուսանողների գիտելիքների յուրացմանը, ինքնուրույն (կամ ուսուցչի օգնությամբ) վերլուծությանը պրոբլեմային իրավիճակներ, խնդիրներ ձևակերպելով և դրանք լուծելով առաջ քաշելով վարկածները, դրանց հիմնավորումներն ու ապացույցները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., 'Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ', Երևան, 1975 թ.
2. Ասատրյան Լ., 'Մանկավարժություն', Երևան, 2017 թ.
3. Ղուկունյան Գ., 'Մանկավարժություն', գիրք I, Երևան 2005 թ.
4. Մանուկյան Ա., 'Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր', Երևան, 2013 թ.
5. Մկրտչյան Մ., 'Մանկավարժություն', Երևան, 2008 թ.
6. Յու. Ամիրջանյան, 'Մանկավարժություն', Երևան, 2005 թ.
7. Махмутов М. ; “Организация проблемного обучения в школе”; М.; Просвещение; 1977 г.
8. Оконь В.; “Основы проблемного обучения”; М.; Просвещение; 1968 г.
9. Слостенин В., И. Ф. Исаев, М.;“Педагогика: Учебное пособие для студентов педагогических учебных заведений”; Издательский центр “Академия”; 2013 г.